ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2024 թվականի թիվ 67-Ա

ք. Երևան

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի ԹԻՎ 67-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասի, 43-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով «ՍՊՈՐՏ ՄԻՔՍ» ՍՊ ընկերության՝ անվան փոփոխության մասին դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց***՝

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 27-ի ««ՏՈՏՈ ՍՊՈՐՏ» ՍՊ ընկերության հեղինակազորման մասին» թիվ 67-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ «ՏՈՏՈ ՍՊՈՐՏ» անվանումը փոխարինել «ՍՊՈՐՏ ՄԻՔՍ» անվամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՍՊՈՐՏ ՄԻՔՍ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**

2024թ. հունիսի 28
ք. Երևան